

Արձանագրություն հ. 5

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
19.09.17 թ. կայացած նիստի:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 27--ը:

Օրակարգում՝

1. Ֆակուլտետի սահմանադրական տնտեսագիտության գիտա-վերլուծական կենտրոնի գործունեության մասին հաշվետվություն (զեկուցող՝ կենտրոնի տնօրեն պրոֆ. Հ.Սարգսյան):
2. Անվանական կրթաթոշակներ ստանալու համար երաշխավորություններ տալու մասին հարցը:
3. Ընթացիկ հարցեր:

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի սահմանադրական տնտեսագիտության գիտա-վերլուծական կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Հ. Սարգսյանը: Նա ընդհանուր գծերով ներկայացրեց կենտրոնի հիմնադրման օրվանից մինչ այժմ կատարված աշխատանքները /զեկուցումը կցվում է թղթապանակային տարբերակին/:

Որոշեցին հավանություն տալ կենտրոնի գործունեությանը:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ արտահայտվեցին ամբիոնների վարիչները, դեկանի տեղկալ Գ.Բարխուդարյանը:

Որոշեցին ներքոհիշյալ ուսանողներին երաշխավորել ստանալու կրթաթոշակներ.

1. Մագիստրատուրայի <<Տնտեսագիտություն>> մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Հռիփսիմե Մայիսի Աթանյանին երաշխավորել շարունակելու ստանալ Ստեփան Սիտարյանի անվան կրթաթոշակ:
2. Մագիստրատուրայի <<Տնտեսագիտություն>> մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողուհի Անուշ Ռաֆիկի Պետրոսյանին երաշխավորել շարունակելու ստանալ Գրիգոր Հարությունյանի անվան կրթաթոշակ:
3. Մագիստրատուրայի <<Կառավարում>> մասնագիտության 1-ին կուրսի ուսանողուհի Իրինա Արմենակի Վարդանյանին երաշխավորել ստանալու Գրիգոր Տաթևացու անվան կրթաթոշակ:
4. Բակալավրիատի <<Տնտեսագիտության տեսություն>> մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող Տիգրան Սպարտակի Քարամյանին երաշխավորել ստանալու Գրիգոր Հասրաթյանի անվան կրթաթոշակ:

Ընթացիկ հարցերի շրջանակում Գ.Գալստյանին երաշխավորեցին ստանալու թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու իրավունք:

Ֆակուլտետի գիտխորհրդի
նախագահ, տ.գ.դ., պրոֆեսոր

Ֆակուլտետի գիտխորհրդի
քարտուղար, տ.գ.թ. պրոֆեսոր



Հ.Լ.Սարգսյան

Ա.Հ.Համբարձումյան